կութիւններ են վերագրում, մինչև իսկ սուրբերի զօրութիւն։ Դաւիթը իւր ձեռքն անիծում է թուլանում է։ Մէրին անիծում է, և սողն աւելացնում է. «Նորանց ցեղի բերանը կրակ էր, ինչ անիծէր, այնպէս կը լինէր» (№ 14, § 129, և էջ 36)։ Արդեօք այս գաղափարը նախնական՞ն էր, որ ըղխում էր Զոլանց տան միհրական ծագումից, թէ յետոյ է աւելացել, երբ Մամիկոնեանք խնամութեամբ՝ Սահականոյշի և Համազասպ Մամիկոնեանի ամուսնութեամբ Լուսաւորչի տան ժառանգ դարձան։ Նման գաղափար կայ Լոռու Դսեղ գիւղում ապրող Թումանեանների մասին, ինչպէս մեզ պատմել է մեր բանաստեղծ Յ. Թումանեանը, որոնք Մամիկոնեան են համարւում։ Շեշտենք և այն, որ Զոլանց տան փոփոխակ առաջին անգամն է հրատարակւում Դաւաշու բարբառով, որ և լեզուական մի քանի ինքնուրոյնութիւններ ունի։

§ 5. Ինչ վերաբերում է № 15-ին՝ պէտք է ասենք, որ չնայելով Մոկաց բարբառով եղած հինգ փոփոխակների հրատարակութեան (№ 2, 4, 7, 8 և 11)՝ մենք հրատարակեցինք և այս իրրև մի բաւական ընդարձակ և հանգամանօրէն պատմուածք։ Պէտք է անուշադիր թողնել և պատմող Թումասի այն դիտողութիւնը, որ ըստ բանահաւաք Ս. Հայկունու էր. «Իւր ասածը ստոյգ կը համարէ, իսկ ուրիշ ճիւղերը նոր յերիւրուած աւելորդաբանութիւն» (№ 15, էջ 39, ծանօթ. 2)։ Ուշադրութեան արժանի է այս հանգամանքը. հմուտ վիպասացներ արդէն նկատել են, որ մեր վէպում նորութիւններ, ուրեմն դարերի շերտաւորումներ են աւելանում, շատ անգամ ի հարկէ տեղական։ Նոյնն է հաստատում Վարդան Մոկացին, «Որ Հայը մերի պէս սերտած էր, կասէր շատ վարժ..., որ չէր կարող իւր գիտցածին վերայ մի նախադասութիւն անգամ աւելացնել կամ պակասացնել. նա իրրև Աստուծմէ շնորհեալ մի աւանդ կը պատմէր, շատ անգամ լրջաբար կը զայրանար այն անձանց վերայ, որ իւր գիտցածէն աւելի կը պատմեն և այդ աւելին յերիւրուած, շինծու կը համարէր, հետևաբար ասելն ևս մեղք է, քանի որ ողորմիներ կան, ինչ որ աւանդուած է, այնպէս ասելու է, կասէր նա» (№ 8, էջ 50. հմմտ. № 14, էջ 2, ծանօթ. 1)։

Բացի այդ այստեղ կան հետաքրքրական նորութիւններ։ Այս կողմից նախ աչքի է ընկնում Քուռկիկ Ճալալ ձիու ծագումը, մասամբ և բացատրութիւնը (№ 15, էջ 63—64 ծանօթ.)։ Այս ձին յիշւում է և Քաջանց տան վէպում, որի գլխաւոր դիւցազն է Արշակ Բ. Անուշ և Շիրին շահ անունով։ Եւ որովհետև այստեղ նկարագրած Քուռկի Ճալալու ծագումը շատ նման է Քէօռ-Օղլու Ղռաթ ձիու ծագման, ուստի մեր ունեցած այլ ապացոյցների վրայ աւելանում է մի նորն ևս, որ Քէօռ-Օղլին մեր Արշակ Բ. է. իսկ այդ ձին յիշեցնում է մեզ Տիրան Բ.-ի, Արշակ Բ.-ի հօր, հռչակաւոր